




Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

ԳԵԹՍԵՄԱՆԻՆ I.—Եղերավեպը

Ու ահա արդեն կսկսի մեծ վեպը: Էջերը որ կհետևեն պատմությունն են այլևս ահավոր դեպքերու որոնց պիտի չհավատա վաղվան սերունդը: Մեծ փոթորիկն է որ պիտի պայթի ու պիտի տապալե դարավոր կաղնին: Ամբողջ ժողովուրդ մը Գողգոթա պիտի բարձրանա խաչը ուսին, ու պիտի զգեստվի ճամբան: Ոչ ծերերը պիտի խնամվին, ոչ ալ մանուկները: Պիտի լկվին հայ սրբությունները, ու պիտի խամրի հայ օճախը: Դարերու ավանդն է որ փոշի պիտի դառնա քաղաքակիրթ աշխարհին աչքերուն առջև, արցունքով, սուգով, արյունով պիտի ծածկվի Հայոց Աշխարհը: Ժողովուրդ մըն է որ պիտի նահատակվի՝ որովհետև վազեց լուսին ետևեն, ու չուրացալ իր գերեզմանները:

Չորս տարի պիտի տևե այս անդոհանքը, և իրարու ետևե պիտի գրվին զարհուրելի էջերը եղերավեպի մը, որ նախընթաց պիտի չունենա հայ տարեգրությանց մեջ:

Կոմիտաս քառմենցուցիչ դրվագ մըն է այն մեծ վեպին մեջ: Պիտի խառնեն զայն ալ մահապարտներու հեք կարավանին, պիտի մանածեն հանգրվանե հանգրվան խաչի ճամ-

բուն վրա, բայց ողջ պիտի դարձնեն զայն սպանդեն, որպեսզի ավելի երկար տևե իր չարչարանքը, ու մինչ բովանդակ ժողովուրդ մը պիտի գալարվի արյան ճապաղիքներու մեջ ամբողջ չորս տարի աքսորի ճամբաներուն վրա, ինք ասդին պիտի տվայտի մի-

II.—Ծիվադին ոտնաձայնը

1914 հուլիս 28-ը սև թվական մը կարճաճադեր հայ ժողովուրդի ճակատագրին մեջ ալ: Այդ օրն էր որ կսկսեք առաջին համաշխարհային պատերազմը:

Ան կպայթեր պահու մը, երբ հայ ժողովուրդը երազներով ու հույսերով բռնկած՝ դեռ կհավատար մոտապուտ արշալույսի մը որ իբրև թե պիտի գար ամոքելու դարավոր իր վերքերը, և բանալու իրեն վերելքի ճամբուն:

Սերայովայի ոճիքը, ամիս մը առաջ՝ 1914 հունիս 28-ին, որ պատրվակ պիտի դառնար շուտով աննախընթաց սպանդի մը, պահ մը ցնցեր էր աշխարհը. ցնցեր էր մեզ ալ, բայց դեռ չէինք անդրադառնար լիովին աղետներուն որ մեզ կապասեին:

Երբ, 1914 հուլիս 28-ին, Ավստրիա պատերազմ կհռչակեր Սերբիո մեջ, արդեն սարսափը մեզ ալ պաշարեց: Ռազմի շեփորը արթնցուց մեզ մեր ցնորքներեն, և ամեն ինչ խորտակեց մեկեմ մեր հոգիներուն մեջ:

Հնչակյաններու ձերբակալությունը երկու օր հետո, այն է հուլիս 17/30-ին, Պոլիսը հա-

*Ծարուհաված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի ՌՆՆ Ա-ից, Ե-Ժ-ից, 1966 թվականի ՌՆՆ Ա-2-ից, Ը-Ժ-ից, 1967 թվականի ՌՆՆ Գ-2-ից և 1968 թվականի ՌՆ Ա-ից:

մակեց նոր սարսափով մը: Պահ մը ոչ ոք չգիտցաւ թէ ինչո՞ւ կձերքակալվեին անոնք, ոչ ալ համբանքը գիտեինք բանտ նետվողներուն: Կզգայինք միայն որ դժոխակ շրջան մը կբացվեր հանկարծ մեր առջև, այնքան անուշ երագներն հետո: Կնախագայինք արդեն թէ թուրքը պիտի լուծէ վրեժը այդ երագներուն, ու պիտի պատժէ լավ օրեր հուսացած ըլլալու մեր հանդգնությունը:

Ու երբ, 1914 հուլիս 23-ին (4 օգոստոս), գործացած կհայտարարեն Թուրքիա, մեր սարսափը ավելի լրիվ եղավ: Այլևս պարզ էր թէ թուրքերը պիտի դիմեն նոր արկածախնդրության մը, և ուշ կամ կանուխ պիտի նետվին իրենք ևս կրակին մեջ: Ծատ դառն էր հարվածը գոր կրեր էին Տրիպոլիսը իտալացիներուն հանձնելով քանի մը տարի առաջ, ինչպես և նվաստությունը որուն ենթարկվեր էին դեռ նոր բալկանյան պատերազմին մեջ: Ամոթը արթել կուգեին, հոգ չէ թէ նոր արկածախնդրության մը գնով: Անոնք անպատճառ պիտի մտնեին հետևաբար պատերազմին մեջ: Ծատ ալ իմաստության պետք չկար կռահելու համար որ իրենց հույները դրած էին Գերմանիո վրա: Իզուր էր որ անոնք իրենց բանակը կազմակերպելու հոգը գերմաններուն հանձնէր էին արդեն տարվան սկզբէն և մարզիչի, կազմակերպիչի դիմակին տակ գերման զինվորականությունը իր ձեռքն էր առեր թուրք բանակը: Լիման ֆոն Ջանդերս փաշան իրականին մեջ հրամանատարն էր երկրորդ գործաբանակին, այսինքն նույն ինքն մայրաքաղաքին:

Ու դեռ լուր չունեինք գաղտնի համաձայնությունն գոր 1914 օգոստոս 6-ին Թուրքիա և Գերմանիա կնքեր էին մոտալուտ գործակցության մը համար: Թուրքերը դեռ դիմակը վար առած չէին իրենց երեսն, հուսալով դեռ ատեն մը քնացնել միտս ճակատը, որուն հետ սիրալիք համբույրներ փոխանակեր էին դեռ նոր: Նույն այս ամառը ծովային նախարար Ծենալն ու ելևմտական նախարար Ծավիտը Փարիզ էին դրկեր Ֆրանսիան օրորելու և անկէ դրամ կորզելու համար, ու հաջողէր էին: Ո՞վ կարգելէր զիրենք եթէ այդ դրամը ծախսեին հիմա Ֆրանսայի և իր դաշնակիցներուն դէմ կոլվելու համար:

Օգոստոսի 11-ին գերմանական Գեորգեն և Բրեսլավ մարտանավերուն հյուրընկալումը Դարդանեյէն ներս, ուր անոնք կուգային ապաստանել՝ անգլիական նավատորմին հետապնդումէն խույս տալով, արդեն դիմակը պատռեց: Այլևս տարակույս չթողուց որ թուրքերն ու գերմանները արդեն դաշնակից էին, և որ թուրքերը ասպարէզ կնետվեն շուտով Վիլհելմի կողքին:

Մեր դողը աստիճան մը ևս կաներ: Թուր-

քը, ահալոր զինակցի մը կրթնած, հաշվեհարդարի պիտի ենթարկեր անշուշտ ներքին իր բոլոր հոգերը: Ան ինքզինքը ազատ պիտի զգար այլևս իր ռիսկ առնելու մեզմէ ալ:

Բարենորոգմանց հարցին հետ զուգընթաց՝ թուրքերը սկսեցին էին արդեն ցույց տալ իրենց ջղայնությունը ամեն հնարավոր առիթով: Նման առիթներ էին եղեր, օրինակ, թուրք ժանդարմայի մը սպանությունը Ատափազարի մեջ տառերու գյուտի հոբելյանի օրերուն, դեպք որ դրդեր էր թուրք իշխանությունները հալածանքի և խուզարկությանց դիմել տեղվույն հայության տոնական ցրնծությունը ասրասփի մեջ խեղդելով, և Ջեյթունի կարգ մը դասալիք հայ զինվորներու պարագան՝ որ պատրվակ էր եղեր թուրքերուն զինվորական արշավանք ասրբել Ջեյթունի վրա, ճգմելու համար արծիվներու դառավոր բույներ: Ու ասոնք՝ իբրև դեռ պատերազմի մեջ չէր մտած Թուրքիան: Ու ավելցուցեք ասոնց վրա հայերու դեմ կազմակերպված բոլկոտը գանազան զավաճեցում՝ մասնավորապես Սեբաստիոն, Զմյուռնիո և Բրուսայի մեջ, զանազան վայրերու ինչպես Տիգրանակերտի և Արրիանապոլսի մեջ սարքված հրդեհները՝ որոնց զոհ գացին առավելապես հայ թաղեր, և վերջապես այլազան ճնշումներ և հալածանքներ հայ հրոսակներ հետապնդելու, դասալիք հայ զինվորներ ձեռք անցընելու կամ գեներլ խուզարկություն կատարելու պատրվակին տակ:

Ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը եթէ պատերազմի մեջ մտնէր թուրքը և իր ձեռքերը բոլորովին ազատ ըլլային:

Ի՞նչ պիտի ընեինք մենք, հայերս, թշնամի մը դեմ որուն հոգին լեցված էր թույնով, և որ այլևս բոլորովին անպաշտպան կզուներ իր որսը:

Դժվար էր մեր կացությունը, որովհետև թշնամին պիտի չհալտար՝ ինչ քծինք ալ փորձեինք հիմա, և պիտի անողորք մնար ինչքան ալ զգուշ ըլլայինք պատրվակներ չտալու համար իրեն:

Հուլիսի վերջերուն, երբ արդեն մթնոլորտը կմոռայլէր Եվրոպայի մեջ, Ազգ. վարչությունը որոշէր էր «օսմանյան կառավարության հետ իր ունեցած հարաբերության մեջ վերջին աստիճանի զգուշ և հաշտարար ուղղություն մը ընդգրկել, նույնիսկ կենսական խնդիրներու մեջ»:

Ու իրավ ալ հազար փորձ ըրավ պատրիարքարանը որպեսզի ողորքէ թշնամին, ու անոր առիթ չտա ճգմելու գոհը: Իր փորձերը մամուլի մեջ ալ արձագանք կգտնեին օրը օրին, և նույնիսկ թուրք թերթերը գոհունակությամբ կհիշատակեին զանոնք:

Հետո՞: Ի՞նչ պիտի ըլլար հետո: Ոչ թուրքերը մեր սիրո զգացումներուն կհալտային,

ոչ ալ մենք թուրք թերթերու անուշ խոսքերուն...

*
* *

Փակված էր էջ մը հայոց պատմության մեջ՝ գերեզման դնելով հետը միասին հույսերն ու ցնորքները զորս սպրեցանք քանի մը տարի:

Կզգայինք բոլորս որ դժնդակ էջ մը կրանա մեզի մեր պատմությունը:

Ու կլսեինք արդեն ոտնաձայնը ճիվաղին...

III.—Պահ մը ազատ օդի մեջ

Հոգեկան տառապանքի զարհուրելի շրջան մը եղան այն ութը ամիսները որոնք սկսան պատերազմին հետ և որոնք պիտի գային հանգել այն սև գիշերվան երբ ճիվաղը դուռները զարկավ մանգաղ մը ձեռքը:

Տեսակ մը մղձավանջ համակեր էր բովանդակ հայությունը թուրք մայրաքաղաքին և գավառներու մեջ և երթալով ավելի կխեղդեր մեզ՝ քանի գերմանական հաղթանակներու լուրերը կուգային զանազան ռազմա-նակատներն և քանի թույնը կխտանար թուրքերու նշավածքներուն մեջ:

Զգեստված՝ իր խանդավառության մեջ, ու հոգին լեցված հազար կասկածով ու վախով, ահալոր օրեր կապրեր մանավանդ հայ մտավորականությունը: Բաց էին դեռ ճապարակները, բայց ոչ որ մտքեն կանցըներ հեռանալ: Այն մասին պիտի մտածեր, ավա՛ղ, շատ ուշ:

Եվ սակայն ճիշտ այդ օրերուն Կոմիտաս շունչ առնել ուզեց պահ մը: Իր քայքայված ջիղերը կազդույրի պետք ունեին պահ մը: Հոգը չըրավ որ աշխարհ բռնկված էր այդ միջոցին, ու մեկնեցավ Եվրոպա:

1914 սեպտ. 10-ին Գերմանիայեն ան կը գրե Զոպանյանին թե «ամեն իրիկուն opera եմ գնում. Վագների երկերի շարքն են տալիս այս և եկող շաբաթ. շատ ուրախ եմ, որ սկզբից հասա»¹:

Երաժշտական հանձնաժողովը զոր պատրիարքարանը կազմեր էր նորո 1912-ին պատրիարքական փոխանորդ Ղևոնդ վրդ. Դուրյանի նախագահության տակ, անդամ կարգելով անոր Արիստակես Հիսարյան և Խորեն Հարությունյան քահանաները, և չորս ալ աշխարհական օրվան երաժիշտներեն՝ Լևոն Խանճյան, Գրիգոր Մեհտերյան, Գրիգոր Զուլհալյան և Երմոգ Գույումճյան², ծընունդ կառներ շրջանի մը երբ արդեն թա-

փեր էին հայ տիրացուներու ակոսները, ու իր պաշտոնը ուրիշ բանի մեջ չկայացավ այլևս բայց եթե քննել իրեն ներկայացող տիրացուները: Այդ հանձնաժողովը ուզեր էր լավագույն պատարագ մը որդեգրել Պոլսո եկեղեցիներուն համար, ու խնդրեր էր Կոմիտասեն չզլանալ իր աջակցությունը:

1914 սեպտ. 26-ին Շարլոտտենբուրգեն կգրե Զոպանյանին.

«Պոլսի երաժշտական քննիչ հանձնաժողովին ինչ որ պետք էր գրեցի և տետրակն ալ դարձուցի իրանց: Ինչ կվերաբերի իմ կազմած պատարագի արարողության, ուղղակի անհնար է այնտեղի եկեղեցիներում գործածելու համար, որովհետև խիստ բարդ է՝ ըստ պահանջման եղանակների խորհրդողավորության. ոչ մեկը կառավարել կարող է իմ պատարագը, եթե նույնիսկ հարմար երգեցողներ իսկ գտնելու լինին: Կ. Պոլսի և առհասարակ Ասիան չի տալիս թավ և բամբ ձայներ, որոնք մեծ դեր են խաղում բազմաձայնության մեջ. մյուս կողմից իմ պատարագը գրված է 1—9 ձայնով, այնպես որ այդքան նուրբ դասակարգություն ձայների նոքա ըմբռնել, գտնել ու գործադրել կարող են. իսկ նույնը ես ինքս քառաձայնի վերածելն անմտություն եմ համարում, որովհետև խորհրդավորությունը կվերանա և տեղը կանցնե միայն ցամաք ու մերկ արվեստ, որ ոչ մի ժամանակ չեմ ցանկանում կատարել ու լսել: Այս է պատճառը, որ չեմ առաջարկել իմ պատարագը, որ դեռ նույնիսկ շատ լուրջ ու մանրակրկիտ ուսումնասիրության է կարոտ, վերլուծության է կարոտ. ես չեմ շտապում: Մյուս կողմից, ի՞նչ կասեն. երբ ես խայտառակեմ նոցա գրվածքը և տեղն իմն առաջարկեմ. չէ՞ որ կասեն, դիտմամբ է գեխը կոխել մերը, որպեսզի իր գրածին քննացք տա: Աստված չանե, այդ անողը չեմ: Նոցա համար նույն արժեքն ունի թե՛ իմ և թե՛ մի տիրացուի կազմածը (վերջինս գուցե ավելի արժեքավոր լինի), որովհետև ոչ նորա պակասության և ոչ իմն առավելության հասկացողությունն ունենա»³:

Եվ սակայն Կոմիտաս աճապարեց Պոլսի ուսումնալ: Աշխատի կուգեր նույնիսկ մղձավանցի աղբ օրերուն:

IV.—Կոմիտաս մղձավանցի օրերուն

Պոլսի վերադարձին՝ Կոմիտաս բոլորովին անճանաչելի կգտներ Պոլիսը: Հանրային գործունեությունը, հայ կյանքեն ներս, կանգ առած էր իսպառ: Ազգային երես. ժողովը իր նիստերը դադարեցուցեր էր վաղուց, իսկ

¹ «Տեղեկագիր», 266:

² Արիստակես քհն. Հիսարյան, «Ընդարձակ տալիս», 1927, էջ 254:

³ «Տեղեկագիր», 266—267:

պատրիարքարանը, շվարած դժբախտ լուրերեն որոնք գալստներեն կհասնեին անընդհատ՝ չէր գիտեր ո՛րը զարներ գլուխը: Թուրք պարլամենտի հայ անդամները, շվարած իրենք ալ, իզուր կփորձեին բանով մը օգտակար ըլլալ Զավեն պատրիարքին ու անոր կողքին մնալ հանդգնող անգոր թաղաքական ժողովի մը: Հայ թերթերը, իրենց ծավալը սեղմած, հեռագրական լուրերը և թուրք մամուլին կարծիքը արձանագրելով կբավականանային:

Ծառեր կարծած էին,—և բնական ալ էր կարծել,—թե միջապահի այդ ամիսները շլատման շրջան մը եղան Կոմիտասի համար ևս:

Անոնք որ այդ օրերուն շփում ունեցան իրեն հետ՝ վկա եղան սակայն հոգեկան այն կորույթին որ անվթար կմնար Կոմիտասի մէջ: Բոլորես ավելի ան կշարունակէր տեղը մնալ իր ջիւղերուն, և ուժ ներշնչել իր շուրջիներուն ալ:

Օր. Աղավնի Մեսրոպյան, Կոմիտասին նվիրած իր հուշերուն մէջ, իր ընթերցողներուն պատմելու համար քաջությունը զոր վարդապետը կպահէր այդ օրերուն ալ. հետևալ դէպքը կպատմե.

«1914 թվի աշնանամուտին՝ Հետպելի կղզի դասի կերթաի: Ծոգենավի կամրջակին վրա հանդիպեցա Կոմիտասին, Փանոս Թերլեմեզյանին և Հրանտ Ասատուրին: Կոմիտասն ու Փանոս Թերլեմեզյանը հյուր կերթային Հրանտ Ասատուրի մոտ՝ Հայ կըղզիի տունը:

Մեր մոտավորապես երկու ժամ տևող ճամփորդության կեսին Մարմարան հանկարծ մթազնեց, կանաչ-կապույտ ջուրերը սպիտակ փրփուրներով ծածկվեցան և մեր գլխուն վերև շողացող արևը անհետացավ գորշ ամպերու տակ: Պայթեցավ սպաւիղ փոթորիկը... Հյուսիսային ուժեղ քամին թղթի կտորներու պէս օդը հանեց թուրք կանանց հարեմական բաժնի ծանրաքաշ վարագույրներն ու նույնիսկ անոնց ճամփորդական իրերը: Ահալոր աղետը կսպառնար ամենի ալիքներուն խաղալիք դարձած մեր շոգենավին մէջ գտնվող հարյուրավոր ճամփորդներուն:

Կոմիտաս, կորույթի և պաղարյուն, կանգնած կամրջակին վրա, կփորձէր հանդարտեցնել խուճապի մատնված ճամփորդները, համոզելով մեծերը և շոյելով ու փայփայելով անչափահասները: Թուրք կիներն ու այրերը, անոր քղանցքները համբուրելով, շեհիթ (սուրբ, մաքրակրոն) Կոմիտաս էֆենդին աղոթքներ կաղերսեին»⁴:

Հարկ կա՞ ըսելու որ երևակայությունն ալ խառնված է այս պատմության: Եվ շատ ալ թոյլ չէր տալու է մարդ իր երևակայության՝ համարձակությունն տալու համար որ քրիստոնէա հոգևորականի մը մոտենան այդ օրերուն շոգենավին մէջ, կամ Կոմիտասի ընկերակից տալու համար Փանոս Թերլեմեզյանը որ վաղուց է Վան կգտնվէր...: Միակ ճշմարտությունը կորույթն է զոր Կոմիտաս ցույց կու տար վտանգին առջև:

Ծիշտ է որ ան գրկված էր համերգներ տալու հնարավորութենէն: Նախ շրջանը շատ ալ պատեհ չէր հրապարակային միան ելույթներու համար, երբ թեղանթը կորուտար ամեն կողմ սարսափի տակ պահելով նաև Պոլիսը, և երբ, մանավանդ, հայերուն համար մուրը քաշվելու պահն էր: Ասկէ զատ իր խումբը ցրված էր այդ պահուն: Մեծ մասը իր երգիչներէն զինվոր գացած էր:

Այնուամենայնիւ Կոմիտաս այդ պայմաններուն մէջ անգամ բորձեր կներ վերակազմելու իր խումբը:

Կոմիտաս նվիրված մնաց իր դասերուն ալ: Առաջին հերթին՝ իր մտահոգության առարկան շարունակեցին մնալ իր վեց սաները,—վեց էին դեռ այն ատեն, Արտաշես Ապաճյան իր աչքերը տակաւին փակած չըլլալով: Անոնցմով կշարունակէր զբաղիլ, թեև անոնցմէ ալ զինվոր գացողներ եղան:

1914-ի աշնան տարեմուտին ստանձնեց նաև իր դասերը Ազգային կեդրոնական վարժարանի մէջ: Դասեր ունեցավ Նիկողոսյան դպրոցի մէջ ալ: Խոսքը տանք նորէն Աղավնի Մեսրոպյանին.

«1914 թվի դպրոցական վերամուտին Կոմիտասը Բերա-Բանկայթի Նիկողոսյան երկսեռ գիշերօթիկ և ցերեկօթիկ ազգային վարժարանի կողմէ հրավիրվեցավ իբրև երաժշտության դասատու:

Ծառ մեծ եղավ վարժարանի ուսուցչական կազմի և աշակերտության զարմանքը, երբ տեսան որ հակառակ իր բազմազբաղ փիճակին, Կոմիտաս ոչ միայն համաձայնեցավ իրենց վարժարանին մէջ դասեր ընդունիլ, այլև ջերմ փափագ հայտնեց գոնե շաբաթը երկու ժամ զբաղվիլ նաև մանկապարտեզի 6—8 տարեկան երեխաներու երգի ու պարի դասերով:

Քոյրս՝ Արաքսի Մեսրոպյանը, որ Լոնդոնի Կեղբորնի Ֆրոպելյան ինստիտուտէն վկայված ըլլալով, այդ օրերուն կապված էր Նիկողոսյան վարժարանին՝ իբրև մանկապարտեզի խորհրդատու, կպատմէր որ մանկապարտեզի դասի շրէրը Կոմիտաս շատ ուրախ տրամադրության մէջ կըլլար: Ան միշտ դասի ժամէն առաջ կու գար, և օգտագործելով մանուկներու զբոսանքի ազատ

⁴ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 302—303:

ծամերը, կհավաքեն զանոնք իր շուրջը և կերգեր ու կպարեր անոնց հետ»⁵:

Շատ քիչ մարդիկ կրնան իրենց հոգին այսքան անվթար պահել նման խռովյալ օրերու:

Պոլսեն 13/26 հոկտեմբեր թվականով կգրե Ֆիլիպե՝ իր Երվանդ Հակոբյան բարեկամին:

«Ժամանակիս վայրագություններեն ըստ կարելիույն հեռու պահելով միտքս ու զգացումներս, անդադար կաշխատեմ կարևոր ուսումնասիրություններով:

Խմբիս և համերգներու չկրցա տակավին սկսել՝ աշակերտներուս զինվորագրության պատճառով, սակայն և այնպես շաբթուսնոր խումբ կազմակերպելու սկսա: Հույս ունիմ զատկական տոներին հասցնել հնագույն եղանակներով ներշնչված սուրբ պատարագի արարողությունները՝ զորս պիտի ուսուցանեմ նոր խմբիս:

Քաղաքապետությունը հիմը դնելու վրա է երաժշտարանի մը, որի պաշտոնյաներեն մեկն ալ զիս կանչեցին. չմերժեցի, բայց միայն ներդաշնակության դասերն ստանձնեցի, որ ձայնս խնայեմ ու խնամեմ»⁶:

Արդարև Կոմիտասի Փարիզեն դարձեն հետո էր որ թուրքերը նոր փորձ մը քրիկ անոր տաղանդեն օգտվելու: Այդ փորձը նոր չէ որ կընեին անոնք: Անոնք հաճախ ուզեր էին Կոմիտասը իրենց մեջն ունենալ: Քանիցս եղեր էին անոր համերգներուն, ու անոնցմե բաժնվեր խոր տպավորության տակ: Այդ կերպով անոր համբավը մտեր էր թուրք շրջանակներեն ներս, և իրեն հիացողներ ճարել իշխան Մեջիդ Էֆենդիեն սկսյալ մինչև բանաստեղծ Մահմեդ Էմինը:

Այդ օրերուն Պոլսո քաղաքապետն էր դոկտ. Ջեմիլ փաշա, մեկը այն հազվագյուտ թուրքերեն որոնք արոցավ կերպով տքնած են մայրաքաղաքի բարօրությանն ու բարեգարդությանը համար: Գիտության և մանավանդ նկարագրի մարդ՝ ան ոչ մեկ խոչընդոտի առջև կանգ չառավ Պոլիսը վերածելու համար մայրաքաղաքի մը: Հուշերուն մեջ զորս լույս ընծայեց վերջերս կպատմե թե ինչպես գտավ Պոլիսը և ինչպես իր հաջորդին հանձնեց զայն:

Դոկտ. Ջեմիլ փաշա կպատմե իր հուշերուն մեջ.

«Պոլսո մեջ քանի մը տնակե գատ ոչ թատրոնի շենք ունեինք ոչ ալ թեմ էլիշու ի վիճակի որևէ արվեստագետ: Այս քանին

համար շատ կմտատանջվեի: Քաղաքապետության գիտական մարմնի խորհրդականն էի. Օրիքի ծրագիր մը պատրաստել տվի Սուլթան Ահմեդի հրապարակին վրա թատրոնի շենքի մը և քաղաքապետարանի մը կառուցման համար: Մյուս կողմե դերասան և դերասանուհի պատրաստելու համար Ֆրանսայի ակադավոր արվեստագետներեն Օդեոն թատրոնի տնօրենն էի. Անթուանը Պոլիս հրավիրելով տնօրեն կարգեցի Ծաֆադե Բաշի Լեթաֆեթ հարկաբաժնին մեջ հիմնված թատերական արվեստին որուն Դարյուլբետայի անունը տվի: Ներկայի մեր ծանոթ դերասաններեն շատերը հոն ուսան և հասան: Թեև շատ աշխատեցա այն առեմ որ թեմ հանեմ նաև թուրք կիմը բայց չհաջողեցա: Քաղաքապետի պաշտոնեն քաշվելու հետո քաղաքապետական խորհուրդը որոշեց է Դարյուլբետայի հատկացումը դադարեցնել և հաստատությունը ցրվել, սակայն հետո արվեստը սիրող քանի մը հայրենակիցներու ջանքերով սույն անհրաժեշտ հիմնարկությունը փրկել կարելի եղավ»⁷:

Իրենց հիմնած այդ Բոնեթվաթորը թուրքերը ի վիճակի չէին ստեղծելու և վարելու իրենց ուժերով: Մեծ արվեստագետը՝ որ Անթուանն էր և զոր Փարիզեն բերեր էին մեծ զոհողություններով՝ հրաշք պիտի չկրնար գործել: Անթուան Փարիզ դարձեր էր առանց այդ հրաշքը գործելու, և թուրքերը դարձյալ ստիպվեր էին դիմել Մանկյանին և իր հացուցած նոր ուժերուն, որոնց մեջ թուրք երիտասարդներ ալ կային: Ասոնք պիտի ըլլային օր մը թուրք թատրոնն ստեղծողը:

Դարյուլբետայի կողքին թուրքերը հիմը դրեր էին երաժշտանոցի մը ևս: Այնտեղ ալ հար օգնության հասեր էր իրենց: Երաժշտանոցի նույնիսկ արևելյան երաժշտության դասերը անոնք վստահեցան էին հայու մը, Լեվոն Խանճյանին, որուն նման վարպետ դեռ չուներին:

Արդ, նույն այդ Ջեմիլ փաշան, որ դեռ կը մնար քաղաքապետի պաշտոնին վրա, Կոմիտասին կարիքը զգաց:

Կոմիտաս պիտի չկրնար մերժել: Ինչքան ալ ծանրաբեռնված ըլլար իր սեփական աշխատանքներով, պահը անպիսին չէր որ թույլատրեր դժկամություն ցույց տալու: Թուրքը չխրտչեցնելու մտահոգությունը Կոմիտասը ևս կտառապեցներ այդ օրերուն, երբ հայը դժբախտ պահ մը կանցրներ:

Արդարև, Պոլսո թերթերը իրենց 1914 սեպտեմբեր 26-ի (9 հոկտեմբեր) թիվով կհրատարակեին պատճենը կոչի մը որ Կով-

⁵ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 262:

⁶ Ռոբերտ Աթայան, Կոմիտասի 1914—1916 թվականների նամակներից, «Գրական թերթ», 1965, թիվ 13:

⁷ Դոկտ. Ջեմիլ Թոփուզլու, Վաթսուն տարվան հուշերս, Իսթանբուլ, 1951, էջ 151—152:

կասի փոխարքան հանուն ցարին կարդացած էր օգոստոս 28-ին Թիֆլիսի հայ երեւելիներուն առջև.

«Հայեր, վսեմ թափի մը մեջ բուվանդակ Մեծն Ռուսաստանի բոլոր ժողովուրդները, Արևմուտքէն Արևելք, ոտքի ելան իմ ձայնիս վրա: Բռնապետության լուծի հինգ դարերէ ետք, հորում ձերիններէն այնքաններ ինկան, և մինչ ա՛յնքան ուրիշներ տակաւին ամենագարշելի նախատինքներու կենթարկւիին, ազատության ժամը վերջապէս հնչեց ձեզի համար: Ռուս ժողովուրդը առանց հրապարտության չէ որ կհիշէ իր նշանավոր հայ զավակները: Լազարյանները, Մելիքովները և ուրիշներ իրենց ռուս եղբայրներու կողքին կռուեցան հայրենիքի մեծության համար: Ձեր դարավոր հավատարմությունը երաշխիք մըն է ինծի համար թէ դուք հանդիսավոր այս օրերուն մեջ պիտի գիտնաք ձեր ամբողջ պարտականությունը կատարել, անդդվելի հավատքով մը՝ մեր զինուց և մեր արդար դատին վերջնական հաջողության վրա:

«Հայեր, միացած ձեր արյունի եղբայրներուն՝ ցարերի մականին տակ, դուք պիտի ճանչնաք վերջապէս ազատության և արդարության բարիքները»⁸:

Թաւմիս, զգույշ իր արտահայտությանց մեջ՝ ինչպէս կըլլան բոլոր անոնք որոնք դալ մը կուտան առեմ, կրավակաճանար վստահություն հայտնելով որ «հայերը, որոնք հինգ դարէ ի վեր օսմ. կայսրության սահմաններուն մեջ իրենց ազգայնության, լեզվին և խղճին տեր ըլլալով ապրած են և այս երկրին ամենէն կարևոր դիրքերը գրաված, խոր զարմանք մը պիտի զգան Ռուսիո մեջ հրաշքով իմն արթնցող ազատության և անկախության սիրուն հանդէպ», և որ ցարին այդ կոչը «ո՛չ մէկ ազդեցություն առաջ պիտի բերէ հայ հայրենակիցներուն մեջ, որոնց օսմանցիության և կատարման տաճած հավատարմական հարումը նշանախեցի մը չափ անգամ չէ այլափոխված, հակառակ մէկ քանի տարիէ ի վեր լարվող ամեն կնքի տրտումներու»⁹:

Կոմիտաս տեղյակ էր այս բոլորին: Կզգար որ քալության նոխագի մը կարիք կար: Այդ նոխագը ինքն ուզեց ըլլալ:

V.—Տքնության նոր ամիսներ

1914 հոկտեմբեր 14-ին Թուրքիան պատերազմի կստներ Գերմանիո և իր զինակիցներու կողքին: Անձկության նոր շրջան մը կը-

բացվէր հայ ժողովուրդին համար: Այլևս ոչ մէկ կասկած կար որ թուրքերը հաշվի պիտի նստին հայոց հետ, ոչ միայն վրեժը առնելու համար հայոց փորձերուն խաղաղ կլանք մը ապահովելու իրենց հայկական նահանգներուն մեջ, այլ և նոր առիթներ չտալու համար հայուն որպէսզի թուրքը անհանգիստ ընէ: Թուրքերը ավելի պատեմ վարկիւսն պիտի չգտնէին տարիներէ ի վեր իրենց որոնացած դավերը սարքելու համար հայ տարին դեմ, քան հիմա, երբ այլևս ազատ էին համաձայնական պետությանց անմիջական հակակշիռէն, իսկ Գերմանիա իրենց կողքին էր՝ ազատ ձգած իրենց ձեռքերը:

Ազգային իշխանությունները ամեն բան ըրին այնուամենայնիվ՝ ողորդելու համար գազանը:

Այսպէս, Ազգ. վարչությունը 1914 հոկտեմբեր 20-ին, Թուրքիո պատերազմին մեջ մտնելէն քանի մը օր հետո, կհանձնարարէր պատրիարքին լալ հարաբերություններ մը շակել իր թիմահատական կուսակցության և կառավարության հետ, կթելադրէր հայկ. դրամատան վարչության նախաձեռնությունն ստանձնել շրջուն հիվանդանոցի մը, և կորոշէր հրավեր ուղղել հայ ժողովուրդին որպէսզի լիովին կատարէ իր հայրենասիրական պարտականությունները:

Ազգ. վարչության ադ որոշման վրա էր որ Զավեն պատրիարք հեռագրով հրահանգ կու տար իսկույն բոլոր առաջնորդներուն «հորդոր կարդալ ժողովուրդին որպէսզի ետ չըկենա ամեն կարգի զոհողութենէ՝ պանծացման համար օսմ. գահուն, որուն հարած է տոկուն հավատարմությանը և մեր նվիրական հայրենիքին պահպանության ու պաշտպանության համար»:

Հեռագրական այդ հրահանգէն զատ Պատրիարքարանը շրջաբերական մը կուղղէր բոլոր զավատներուն, հանձնարարելով որ հայ ժողովուրդը «ինչպէս դարերէ ի վեր օսմ. հառեմքին հանդէպ իր պարտականությունները կատարած է, այսուհետև ևս կատարէ ամենալոյս անկեղծութամբ» և սիրահոժար պատասխանէ կառավարության բոլոր կոչերուն, և հրահանգելով առաջնորդներուն ու ազգային մարմիններուն, «որպէսզի տեղական կառավարական պաշտոնէության հետ սիրալիք հարաբերություններ մը շակեն, անոնց ջանքերուն օժանդակեն», ու թելադրէն ժողովուրդին ալ «որպէսզի իրենց դրացիներուն և հայրենակիցներուն հետ սիրով վերաբերվին, օգնեն անոնց անձնվիրութեամբ և զոհողությամբ, հարգեն անոնց զգացումները, հետատես և շրջաֆայաց ըլլան ամեն ժամանակն ավելի, առիթ չտան թշուրիմացությանց, և ըստ ամենայնի զգույշ ըլլան իրենց խոսքերուն և վարմունքին մեջ,

⁸ «Մոմիթեռն օրինթա», 9 հոկտեմբեր 1914:

⁹ «Թաւմիս», 1914 տեղեկութիւն 26 (9 հոկտեմբեր):

գի հայտնի է թե՛ այսպիսի ժամանակի մը մեջ՝ մարդիկ ջղագրգիռ ու դյուրագգաց կը դառնան»:

Խառն ժողովը իր հոկտ. 24-ի (նոյեմբեր 6) նիստին մեջ ևս կորոշել շրջաբերական մը ուղղել գավառի առաջնորդարաններուն որպէսզի հայերը շարունակեն, չթերանան իրենց հայրենասիրական պարտականութեանց մեջ, 10 հազար գույգ գույպա նվիրել թուրք բանակին, Ազգ. հիվանդանոցին մեջ 150 անկողիննոց սրահ մը պատրաստել պատերազմի մեջ վիրավորված զինվորներուն համար, և խնդրել Հայ բժշկական միութենէն որպէսզի Բերայի, Գումքափոռի և Սկյուտարի մեջ դասընթացքներ հաստատեն՝ վիրավոր զինվորներու դարմանման համար հիվանդապահներ պատրաստելու նպատակով:

Հետո էինք հավատալէ որ այս և նման փորձերով կրնանք սիրաշահել թուրքը: Մեզի անձնանդը չէին պատրաստությունները գործ կտեսներ ան ճշմարտութեան հոգի իր պատեհ սեպած ժամուն: Եվ սակայն մեր կրցածը կրնէինք որպէսզի պատրվակ չունենա ան:

*
* *

Կովկասէն հասած լուրերը մեր հոգ մը կալելցնէին մեր այնքան մտատանջությանց վրա: Պոլսո մեջ բոլորը գիտէին արդէն թե Թիֆլիսի մեջ պատրաստություններ կան կամավորական հայ խումբեր կազմակերպելու համար, և թե ռուս կառավարությունը խոստումներ կշռայլէ հայերուն զանոնք իր կողքին ունենալու համար Թուրքիո վրա իր մոտակա արշավին ատեն: Թուրքերուն ձեռքը աղվոր պատրվակ էին այդ բոլորը իրենց վաղուց ծրագրած դավը փութացնելու համար, թեև անոնք գիտէին որ մոլորիսկ Պոլսո դաշնակցականները դեմ էին Կովկասի այդ շարժումներուն:

Եվ ահա, Թերմեզան իր 1914 24 հոկտեմբերի (նոյեմբեր 6) թիվին մեջ արձագանք կըլլար այն լուրերուն որոնց համեմատ մինչ Ռուսիա «վրացի և ասեթին տարրերուն չը վստահելով անոնց բոլորն ալ՝ վրացի և ասեթին սպաներու և գորավարներու հետ միասին Լեհաստան դրկեց, հայերեն 50 հազար հոգինոց բանակ մը կազմելով դրկեց մեր արևելյան սահմանագլուխներուն առաջին շարքերու վրա: Մյուս կողմէ Կովկասի փոխարքա Վորոնցով Տաշքով Կովկասի հայ պետերը և երևելիները հավաքելով պահանջեց հայերեն կամավորներու գումդեր կազմել: Ասոր վրա Կովկասի հայաբնակ քաղաքներուն և գյուղերուն մեջ ձեռնարկվեցաւ կամավորներու արձանագրության և հավաք-

ված հայ կամավորները զինելով Կովկասի պահպանությունը անոնց հանձնեց»:

Թուրք թերթը կալելցնէր որ «Ռուսիո այս ձեռնարկները կապացուցանեն թե ներկա պատերազմին առթիվ կուգէ օգտվիլ Կովկասի հայերեն և հիշյալ հայերուն շնորհիվ կուգէ Կովկասի սահմանագլուխին մեր մեկ կողմն ալ գծողություն սերմանել: Կասկած չկա որ բոլոր այս պարագաները ծանոթ են մեր կառավարության և հետևաբար կառավարության կողմէ թշնամիին այս վատ ցանկությանց դեմ անհրաժեշտ միջոցները ձեռք առնված են»:

Թերմեզան գոհունակություն կհայտնէր հետո որ հայոց պատրիարքարանի կողմէ պատշաճ շրջաբերական մը ուղղված է Թուրքիո հայերուն և իր կողմէ խորհուրդ կու տար հայերուն չմոռնալ թե ստիպված են կողք-կողքի ապրիլ թուրքին հետ:

«Ազատամարտ» կստիպվէր գրելու իր 26 հոկտեմբեր (8 նոյեմբեր) թիվով.

«Մենք դեմ ենք ո՛ւր օտար գրավման այն հողին, ուր կապրի թրքահայ ժողովուրդը՝ կողք-կողքի իր թուրք և քյուրտ հայրենակիցներուն հետ, Վանէն մինչև Խարբերդ, Կարինէն մինչև Սեբաստիա:

Թրքահայ ժողովուրդը չի կրնար ոչ մեկ վայրկյան ծախու ապրանք դառնալ և թույլ տալ որ իր պատմական ճակատագիրը ծառայէ իբրև շահադիտության նյութ՝ այս կամ այն կառավարության ձեռքը: Թրքահայ զինվորը, իբրև քաղաքացի, պիտի կուի արիությանը և վճռականորեն՝ բոլոր այն սահմաններուն վրա, ուրկէ կարշավէ թշնամին: Եվ ինչպէս որ մույն հայ զինվորը, բալկանյան ռազմադաշտին մեջ, ապացուցը տվաւ իր քաջության և իր պարտաճանաչության, միևնույնը պիտի ապացուցանէ, հավատացած ենք, և աւս անգամ»:

Նման հավաստիքներով չէր որ թուրքերը պիտի հրաժարէին իրենց սև ծրագիրներէն: Իրականին մեջ պատրվակի ալ պետք չունէին անոնք գործի անցնելու համար: Պատրվակներ հետո էր որ պիտի ճարէին, արդարագնելու ատեն իրենց եղեռնը:

Հուզումնալից օր մը ապրեցաւ Պոլիս 1914 նոյեմբեր 9-ին ալ: Այդ օրն էր որ քափիթուլասիաները ջնջված հայտարարէր էր Բարձր Դուռը ամբողջալից ցուցեր շղթայազերծելով մայրաքաղաքին մեջ, ցուցեր որոնք սարսուռով համակեցին պահ մը Պոլսո քրիստոնյաները: Այդ ցուցերը՝ թուրք մտավորականներէ ստաջնորդված՝ պողոկոմը չէին միան ցնծության, գոր թուրք կզգար Եվրոպայի լուծէն ազատած տեսնելով իր երկիրը, այլ անոնք տեսակ մը հառաջաբան էին մոլեգնության գոր ան ցուց պիտի տար շուտով քրիստոնյաներուն դեմ: Սպառնա-

կան բացազանչությունները զորս ցուցարարները կաղաղակեին Բերայի պողոտայեն անցած ատեն՝ չէին կրնար մտահոգ չընել մեզ:

*
*
*

Թող զարմանալի չլի ընթերցողին երբ իրեն ըսենք թե իր հոգեկան ուժերը անվթար պահեց Կոմիտաս ճուլհիսկ ալո պահուն: Անոնք որ ալ օրերուն զինքը տեսան՝ վկա են իր հոգեկան կորույթին: Բոլոր լուրերը ան ալ կիմանար մեզ պես, բայց կոյմանար մեր բռնություն ավելի: Ինչէ՞ր չտեսաւ ան իր պատուհանէն: Յուցի բոլոր թափոքները կանցնեին իր տան առջեւ, ու ամեն օր կտեսներ ցուցարարներուն բռնաբանները որոնք կճոճեին օդին մէջ: Իր բնակարանէն շատ հեռու չէր Պատերազմական վարժարանը, ու ան հաճախ կտեսներ պահեստի սպացուններու շարքերը որոնք կտողանցեին իր մոտեն, օդը թնդացնելով իրենց պատմական երգերով:

**Ներքեմի սորմա բանա,
Գիտիդորում բեն հարբա.
Էզան սեսի դուլուվադոր,
Խաչ դիքիմիշ մենքերե.
Քյաֆիր Մուսթֆ բայրաք ասմըշ
Ջամի երե, հեր երե:
(Մի հարցնիր ուր կերթամ
Պատերազմի կերթամ ես.
Էզանի ձայն չի լսիր ա՛յ.
Խաչ է տնկված մենքերին.
Գյալուտ ոռուք դրոշ է պարզած՝
Սգկիթներուն, ամեն տեղ):**

Կոմիտաս ալ օրերուն անգամ չլքեց իր աշխատանքները. չգիտենք՝ կնակագա՞ր արդեն ևս օրը, ու կո:գեր ավարտել ինչ որ կրնար: Բայց ստույգ է որ ան շարունակեց աշխատել: Չիթունի որ իր մոտիկ աշխատակիցն էր եղած ադ օրերուն՝ կպատմե մեզի.

«Ընդհանուր ազգային խանդավառության ալո շրջանին (1913-ին), իմ նորահաս տառ ընտանեկան ու առևտրական պատմաններու բերումով ես հնարավորություն չունեցա Էջմիածնէն շարունակել ձգված երգերուն մնացորդ մասը երգելու, որպէսզի Կոմիտաս ձայնագրեր անհասպաղ: Հագիվ տարի մը վերջ, 1914-ի նոյեմբերին, կարելի եղավ վերսկսել կիսատ թողված աշխատանքը:

Դարձաւ գիշերները, ընթերցեմ մինչև կեսգիշեր, ես իրեն կերթայի: Գրասեղանին ու դաշնակին առջև, ցանկիս վրայէն կերգէի. իսկ Կոմիտաս կձայնագրեր իմ գրի առած Վասպուրականի ժողովրդական երգերն ու խաղասացքներն նոր հիւնյակ մը,

մանկապարտեզի երգերն ալ միասին առած: Այս երկրորդ մասին ձայնագրումի ընթացքին էր, որ Կոմիտաս ու ես խորհեցանք կազմել մանկապարտեզի հատուկ երգեր, ժողովրդական երգերէ քաղելով ու մշակելով:

Մինչդեռ ելրուպական զարգացած ազգերն ունեին այնքան սիրուն և գունատիպ պատկերազարդ մանկական երգատեսեր, — նույնիսկ կովկասահայեր սկսած էին շարք մը նման ձեռնարկներով կրթել մատուցողները, — մեր մէջ (թրքահայաստան)՝ քաղաքական պատճառներով՝ բոլորովին անմատչելի էր մնացած ալո բարիքն ու անհրաժեշտ սնունդը:

Կոմիտասի հետ լծվեցանք ալո տքնության: Եվ նույն տարվան. 1914-ի, դեկտեմբեր ամսուն գիշերաջան նվիրումներով մեջտեղ դրինք **քառասունի չափ մանկական երգեր**: Անոնց ամբողջովին նյութերը ես հանած էի իմ և մասամբ ուրիշներու գրի առած ժողովրդական մանկական երգա-խաղերէն: Այսպէ՛ թե՛ խոսքերը և թե՛ եղանակները Կոմիտասի հետ հղկեցինք ու մշակեցինք՝ հարկ եղած տեղը նյութն ընդլայնելով կամ կրճատելով: Բառերը բացատրված են ինձմէ:

Մեր նպատակն էր տպել զանոնք տեսողներով, գունավոր պատկերազարդ, եղանակներով ձայնագրված, որպէսզի ծառայեն մեր մանկապարտեզական-պանդոխներուն ձեռքին իբր դասատեսը:

Այս ձայնագրալ թերթերը՝ պետք է փրկուրե Կոմիտասի Պոլիս թողուցած և վերջերս Փարիզ փոխադրված ձեռագիրներուն մէջ»¹⁰:

Մինչև մերօրին ատենները, նույնիսկ խազերու մասին իր եզրակացությունները շարադրել և Փարիզի երաժշտական համաժողովին մէջ իր համբավալոր ելույթ ունենալն հետո ալ, ան հետամուտ էր խազերու շուրջ իր ծանոթությունները ընդլայնելու, և նոռ լուսաբանութեան հանգելու: Տիգրան Չիթունին է դառնալ որ մեզ կպատմե.

«Ամենօրա մեր տեսակցություններու ընթացքին ի Պոլիս, 1913—1916. մեն խանդով ան ևհառաւորորձե՛ն զիս, իբր ֆուլորի բազմաբեռ զանգապահ, թե ի՞նչ, բառեր, ձևեր. ասություններ, առաքանական զիծ ու ակնադրներ ծախոք են հաւանգարագետ ժողովրդին, ռոպտեցի անոնց միջոտով կարեմալ յոսաբանել երաժշտական հին խազերու. ստո:սաբանել և ռաստորել անոնց ծառուր, ահու՛մն ու ստո:մները: Կհառգներ, թե հոմանի: ի՞նչ, բառեր լան՝ երաժշտական խազերու: Ի, իրագրել ամեն մեկին դիմ տրված ար-

¹⁰ Տիգրան Չիթունի, Կոմիտասի հետ, «Հայրենիք» ամսագիր, 1986 դեկտեմբեր, էջ 87:

դեն ծանոթ սահմանումներեն դուրս. թե ի՞նչ ձևեր ունին մանավանդ՝ այս կամ այն (իր ցանկի առածներեն) միավանկ արմատ հին բառեր, ունե գործիք նշանակող։

Օր մը գտա զինք սովորականեն տարբեր, հույժ մտածկոտ վիճակի մեջ։ Տենդոտ քայլերով կշափչփեր սենյակին երկայնքը։ Առձեռնը մատներուն մեջ թերթելե հուսահատ՝ պտտեղ ձևով մը դրավ գրասեղանին վրա։ Եկավ դեմս նստավ ու վերցուց բացավ գունավոր պատկերներով գիրք մը, գերմաներեն երաժշտական հատոր մը, հետո ոռուներեն ուրիշ մը։ Ցուցուց ինձի՝ երգի հատուկ նշաններով էջեր և հրավիրեց որ կոչում ընեն ֆուլթորիստի պաշարիս, տամ մեկ քանի բառեր ու ձևեր։

Նշանագիծերուն վրա ակնարկ մը անտեղով ըսի որ՝ այս նշանին նման գործիք մը գեղջկական արորի մեջ կկոչվի **կանդրիկ**։ Ու ձևը թղթի մը վրա գծելով՝ մեկտեղ՝ բացատրեցի կանդրիկին պաշտոնը **վիճկիին** սարսուծին մեջ։ Կոմիտաս ուրախությունեն մանուկի պես վեր-վեր ցատկեց և աչքերուս մեջ իր խայտուն ակնարկը շանթելով՝ ըսավ.

—...Վաղուց իմ հույսը կտրել եմ գրավոր աղբյուրներից։ Առձեռնը անգոր է բոլորովին. պետք է փնտրել անգիր աղբյուրների մեջ։ Հավատում եմ որ ժողովրդի բարբառին մեջեն դուրս պիտի բերեմ մեր երաժշտական խազերի քանալին։

Եվ իսկույն արձանագրեց իր ձեռաց տետրին մեջ **կանդրիկ** բառը, անոր ձևը, պաշտոնը, ինչ որ տվեր էի թույլ մը առաջ։ Ոգեվորված՝ սեղանին վրա առջևս քշեց գույներով ու նշաններով հատուկ մեկ քանի էջեր։ Եվ յուրաքանչյուր ձևին համապատասխան՝

կամ մոտիկ իմաստը շոշափող՝ բառ, ձև, բացատրություն ինչ որ կրցա տալ՝ խնամով ու խանդով արձանագրեց կամ գծեց։

Ապա բերավ նոթատետր մը՝ հայ դասական կամ Ծարականի խազերուն.—**Երկար, սուր, ոլորակ, բեկկորճ, զարկ, ծունկ, թուր, փուշ, խունճ, պարույկ, թաշա, փաթույթ, քարքաշ, կորճա** և այլն, և այլն։

— Դե՛, Զիթունի, ազգագիրի տոպրակդ խառնե՛ խուզե՛ հա՛ն մեջեն ինչ որ կրնաս տալ՝ այս բառերուն և ձայնանիշերուն իբր ստուգաբանություն, իբր հոմանիշ, իբր բացատրություն, իբր նոր ինքնատիպ առում, ժողովրդական անգիր բարբառին հատուկ...»։

Զիթունի կրսե այդ բառերեն շատերուն մասին իր տված ժողովրդական առումներն ու բացատրությունները հրճվանքով լեցուցին Կոմիտասի սիրտը ու կավեցնե.

«Այս առիթով էր որ Կոմիտաս ավելի բացվեցավ ինձի՝ իր մտադրած լուրջ աշխատության մասին։ Այն՝ որ իր վերջին քանի մը տարիներու հարատև մտմտութիւն առանցքը կկազմեր՝ լուծել հայ երաժշտական խազերուն անհայտ մնացած գաղտնիքը, գտնել անոնց բանալին և ստեղծել բուն հայ երաժշտական գեղարվեստը՝ ժողովրդի ոգիին համաձայն»¹¹։

Հոգին հեռուներուն հառած, ջիղերով ամուր, հակած աշխատանքի սեղանին, այդպես դիմավորեց Կոմիտաս ահավոր տարին...

¹¹ «Հայրենիք» ամսագիր, 1936 թվականներ, էջ 88—89։

(Ծարունակելի)